ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0003-3318-3483

ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
https://orcid.org/0000-0002-7428-7900

ԻՍՐԱՅԵԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ

JEL: Y30
DOI: 10.52174/1829-0280_2022.4-175

«Անտարես» հրատարակչության նոր նախաձեռնությունը Սենոր Դենի և Սինգեր Սոլի «Ինչպես է կայանում պետությունը. Իսրայելի տնտեսական հրաշքի պատմությունը» գրքի հայերեն թարգմանությունն է (խմբագիր՝ Վահագն Խաչատուրյան)[1]: Առաջին հայացքից աշխատության վերնագիրն այն տպավորությունն է թողնում, թե դա համակարգված մի աշխատություն է՝ կառուցված տնտեսագիտության ինչ-ինչ սկզբունքների վրա, որոնց կիրառումը պայմանավորել է Իսրայելի տնտեսական հրաշքի երևույթը: Սակայն գրքին ծանոթացումը և մեկնություններն այլ պատկեր են գծում ինչպես ձևի, այնպես էլ բովանդակային առումներով: Սա ամերիկացի ինժեների և իսրայելցի հրապարակախոսի մտորումներն են, որոնք, առաջնորդվելով «խճանկարային» մոտեցումների նախասիրություններով, նպատակ են հետամտում պարզելու «նորարարությունների և քաոսի այսքան մեծ կուտակում» ունեցող երկրի տնտեսական առաջընթացի առեղծվածը: Ինչ խոսք, «կարիքն ու նեղությունը միշտ հնարամտություն են ծնում»: Կարելի է թվարկել երկրների մի

[1] **Դեն Սենոր, Սոլ Սինգեր,** Ինչպես է կայանում պետությունը. Իսրայելի տնտեսական հրաշքի պատմությունը, Եր., «Անտարես», 2022, 312 էջ:

ամբողջ շարք՝ Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան և ուրիշներ, որոնք նույնպես արձանագրել են բարձր տնտեսական աճ: Սակայն Իսրայելի հաջողությունների բանալին հարկ է փնտրել այլ կետում. նշված պետություններից ոչ մեկը չի զարգացրել ձեռնարկատիրության այնպիսի մշակույթ, որ կարելի լինի համեմատել իսրայելականի հետ: Հեղինակները հերքում են արևմտյան մտածելակերպում ամրացած այն տեսակետը, թե դա կապված է «հրեական գործոնի», բնատուր ձեռնարկատիրական ոգու առկայության հետ, ինչպես ժամանակին պնդում էր տնտեսագետ Վերներ Զոմբարտը*: Այսինքն՝ «ունիտար հրեականություն ասվածը՝ թե՛ գենետիկ, թե՛ մշակութային առումներով» չի տեղավորվում այսօրվա հասկացության շրջանակներում, որի բնակչությունը բաղկացած է շուրջ յոթանասուն ազգություններից, որն անցյալի «հրեաների երկրի հակապատկերն է», «սփյուռքի յուրօրինակ խառնարան» է, որտեղ աշխարհի տարբեր անկյուններից «մի տանիքի տակ միավորվել են մշակույթը, լեզուն և սովորույթները»[2]:

Գրքի «Փոքրիկ ազգ, որ կարողացավ», «Նորարարությունների մշակույթը սերմանելիս», «Սկիզբ», «Երկիր, որ ունի խթանիչ ուժ» բաժինները հարցազրույցներ են, դեպքեր, հանդիպումներ, այլ երկրների հետ զուգահեռներ, որոնք ուրվագծում են երկրի կայացման ու վերելքի գործակիցները: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա դրանք հանգում են երեք հիմնական բաղադրիչների՝ բարձր տեխնոլոգիական բանակի՝ որպես բիզնես լուծումների ինկուբատորի, ներգաղթի քաղաքականության և գիտության ու նորարարությունների հսկայական ներդրումների:

Բանակը Իսրայելի բարոյական պաշտամունքն է, որտեղ ծառայում են բոլորը, և բացակայում է ղեկավարությանն աներկբա հնազանդության չոր հիերարխիան: Ինչպես ասում են՝ գեներալը կարող է սուրճ եփել շարքային ծառայողի համար: Իսկ որ շատ կարևոր է՝ դա դարձել է մշակույթի զարգացման կարևոր գործոն, և հնարավոր չէ առանձնացնել այն կետը, որտեղ հատվում է բանակի, կրթության, գիտության, ձեռնարկատիրության և հասարակության միասնությունը: Ստարտափների, կլաստերների, քննարկումների, լուծումների շղթան գործում է ամենուր. «Ամեն ինչ սահմանափակ է», ուստի երկրի հարատևության կարևոր նախադրյալն ապագային ուղղված նոր տեխնոլոգիական լուծումներն են: Ինքնազարգացման ներքին մղումն առաջադրում է նոր անհայտների լուծման անհրաժեշտություն, ինչպես օրինակ՝ նավթի փոխարեն հիբրիդային սկզբունքով մեքենաների ստեղծում, կաթիլային գյուղատնտեսություն և այլն: Դրանով պիտի բացատրել, որ երկրի տարածքի 95 տոկոսը, ըստ էության, պիտանի չէր գյուղատնտեսության համար, սակայն այսօր գրեթե ամբողջությամբ բավարարում է սեփական պահանջմունք-

---

* Տե՛ս **Вернер Зомбарт,** Евреи и хозяйственная жизнь, 2004: Առիթի բերումով նկատենք, որ հայտնի ֆրանսիացի պատմաբան Ֆերնան Բրոդելը, մերժելով այն կարծիքը, թե կապիտալիզմի ծնունդը պայմանավորված է հրեաների ձեռնարկատիրական ոգով, հատկապես ուրվագծում է աշխարհի առևտրական քարտեզում հայերի ունեցած դերը, որ եթե նույնիսկ հրեաներն են դա հայտնագործել, ապա «մյուս ընկերությունների» հետ միասին (տե՛ս **Фернан Бродель,** Материальная цивилизация. Экономика и капитализм XV-XVIII вв., т. 2, М., 2007, էջ 149):

[2] **Դեն Սենոր, Սոլ Սինգեր**, նշվ. աշխ., էջ XXXII:

ները, իսկ առանձին արտադրանքներ նույնիսկ արտահանվում են: Դա այն բանի գիտակցման արդյունքն է, որը, կարծես, հաստատում է մոտեցումը, թե գյուղատնտեսությունը 95 տոկոսով գիտություն է, 5 տոկոսով՝ աշխատանք: Ինքնազարգացման անհրաժեշտությունը այս կամ այն ստարտափի չիրականացման պարագայում (ձեռնարկությունների ձախողումները բնավ չեն նշանակում՝ տրվել կործանման հոգեբանությանը և օգտակարությունից հեռանալու պատրանքին) ծայր է տալիս հաջողության հասնելու նոր սկզբի, պատճառի ու հետևանքների նոր քննարկումների ու նոր ստարտափների: Սա կարևոր առանձնահատկություն է, որ ձեռնարկատիրական մշակույթը դառնում է «տնտեսական վերածննդի և զարգացման գլխավոր շարժիչ», բիզնեսի ձեռնարկատիրական որոշակի կենսաձև, այսպես կոչված, «կառուցողական ձախողումների» կամ «խելամիտ ձախողումների» հանդուրժողականացման վարքագիծ[3]: Զուր չեն Իսրայելն անվանում ստարտափների երկիր, և առաջընթացի համար հենց այն բանի գիտակցումը, որ 21-րդ դարում պետության առջև դրված մարտահրավերները «գաղափարների գորայն ծարան» դառնալն է, այդ գաղափարների ստեղծումը ինչպես երկրի ներսում, պես էլ այլ երկրներում առաջացած գաղափարների օգտագործումը[4]: Այդպիսի պատմություններով հարուստ է գրախոսվող աշխատությունը:

Այն առանցքային հարցը, թե ինչն է Իսրայելին դարձնում նորարարական ու ձեռնարկատիրական, կապվում է կլաստերների՝ որպես մեծ ընկերությունների և ստարտափների տարածքային ամբողջականության հետ, որը միավորում է և՛ մատակարարներին, և՛ ինժեներական կադրերին, և՛ վենչուրային կապիտալը[5]: Տեղի է ունենում իսրայելցիների «անհատապաշտական» հատկության զուգորդում ձևավորված մշակութային պահվածքի այն հատկության հետ, որ հաջողության կարելի է հասնել միայն «թիմային աշխատանքի» միջոցով: Սա է «գաղտնի բաղադրատոմսը»: «Ի տարբերություն սահմանափակ բնական ռեսուրսների,- նկատում են հեղինակները,- գաղափարները տարածվում և օգուտ են բերում այն երկրներին, որոնք լավագույնս կարողանում են դրանք օգտագործել, անկախ այն բանից՝ որտեղ են նորարարությունները հայտնաբերվել»: Ջոն Բեռնարդ Շոուն ասել է. «Եթե դու էլ, ես էլ մեկական խնձոր ունենք, դրանք փոխանակելով՝ ոչինչ չի փոխվի, դու էլ խնձոր կունենաս, ես էլ: Բայց եթե դու էլ, ես էլ ինչ-որ գաղափար ունենանք, դրանք փոխանակելով՝ յուրաքանչյուրս երկու գաղափար կունենա»[6]:

Անհրաժեշտություն չենք տեսնում անդրադառնալու գրքում բերված պատմությունների ընդգրկումներին կամ թվարկելու երկրի առաջընթացի բոլոր արծարծումները՝ կապված այս կամ այն նորարարության դժվարությունների ու լուծումների, այլ երկրների հետ ունեցած կապերի, գործընթացների ընտրության ու զուգահեռների, ներգաղթի, ֆինանսական, այլ և այլ ոլորտնե-

---

[3] **Դեն Սենոր, Սոլ Սինգեր,** նշվ. աշխ., էջ XXXV:
[4] **Դեն Սենոր, Սոլ Սինգեր,** նշվ. աշխ., էջ 221:
[5] Նույն տեղում, էջ 215:
[6] **Դեն Սենոր, Սոլ Սինգեր,** նշվ. աշխ., էջ 218-219:

րի հրապարակախոսական պատկերավորությամբ արված դիտարկումների հետ*: Դրանք, ընդհանուր առմամբ, ներառվում են նշված սկզբունքներում:

Համադրության մեթոդը հաճախ կարող է պատճառ դառնալ գայթակղության: Յուրաքանչյուր երկրի ուղին յուրահատուկ է: Կա մի հայտնի միտք. «Խելոքները սովորում են ուրիշների սխալների վրա, անգետները՝ սեփական»: Վտանգավորն այն է, երբ չի արվում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Նույնությամբ կրկնել որևէ երկրի փորձը հնարավոր չէ, բայց իմանալ պետք է:

Հանկարծահաս «տնտեսական հրաշքներ» չեն լինում. դրանք տասնամյակների տնտեսական արդյունավետ գործունեության իրողություններ են: Ի վերջո՝ կայանում է պետությունը: Այդ է վկայում Դեն Սենորի և Սոլ Սինգերի մենագրությունը:

* Իսրայելի ստեղծման պատմությանը, առանձնահատկությունների ու նվաճումների հարցերի մասին տե՛ս, Մ. Մանուչարյանի և Մ. Մուրադյանի «Իսրայելի տնտեսական հրաշքի» հետագիծը ուսումնասիրությունը, տե՛ս «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հ.1, Եր., 2020, էջ 281-300):